Ա. ՏԱՐԻ ՀԻՆԳՇԱԲԹԻ 17 ՅՈՒԼԻՍ 1897 ԹԻՎ 15

ԲԱԺՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
20 թիւի համար
Վ. տարեկան . . . . . ֆր. 1.50
Վ. տարեկան դուրս . . . » 2
Արտասահման . . . . . » 2.50

# ԿԱՏԱԿ

Գրութիւնք եւ չեն զրկուիր։
Նամակ գրամ եւայն զրկել հետեւեալ հասցէին,
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ԿԱՏԱԿ»ի
Վարնա (Պուլկարիա)։

## ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՒ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Администрация на списанието
„ГАДАГЪ“
ВАРНА (България).

Հասարը 7 1/2 Սանթիմ

Administration du journal
« GADAG »
VARNA, (Bulgarie).

### ՓՈՔՐԻԿ ՆԱՄԱԿՆԵՐ

Զ

Դարերի սարկական կեանքը իւր կնիք դրել է հայ ժողովրդի մտքի ու սրտի վերայ։ Հայը ամեն տեղ ցոյց է տալիս որ նա սարսուկ է, բայց այդ ցաւալի յատկութիւնը, ոչ մի ժամանակ և ոչ մի դէպքում այնքան պարզ չերեւաց, որքան այս վերջին տարիներ և այն էլ այն բանի մէջ, որը սարկութեան հակապատկերն է յեղափոխութեան մէջ։ Հայ ժողովուրդ դերի է տաճկական լծի տակ, նրա աղատիչ յեղափոխականները տարուկ են Եւրոպական յեղափոխականների ծրագիրների լծի տակ։ Խելքի ոչ մի աղաս շարժում, մտքի ոչ մի ինքնուրոյնութիւն դուք չէք գտնում մեր «կեղրանի և բիւրոյի» կազմած ծրագիրների մէջ։ Սա էլ սարկութիւն է և աւելի վնասակար քան տաճկական լուծը։

Իւրաքանչիւր ժողովուրդ իւր պատմական անցեալից յառաջացած պայմանների համեմատ ունի և իւր ներկայի պահանջներ։ Ամեն ազգի մէջ այս օրը երկուայ արդիւնքն է։ Ամեն ինչ որ այս օր տեղի է ունենում Ցրանսիայում, նոյն չէ կարող տեղի ունենալ Ցտաճկաստանում, պատմական երկու երկիրների տնտեսական, քաղաքական կեանքի պայմանները տարբեր են։ Սա պատմութեան օրէնքն է։ Նոյն օրէնքին է ենթարկուած և իւրաքանչիւր ազգի յեղափոխութիւնը։ Ամեն ազգի մէջ նայելով իւր կեանքի պայմաններին, իւր զարգացման, յառաջանում է ներկայից դժգոհութիւն, հետեւաբար ներկան բարեփոխելու պահանջ։ Այս պահանջի իրականացումը կոչւում է յեղափոխութիւն։ Յայտնի է որ ամեն երկրի ներկան նոյն չէ, և բարեփոխելու պայմաններ նոյն չեն, վերցնենք մի օրինակ, Անգլիան և Պարսկաստանը։ Երկու երկիրներում էլ կան ներկայիս դժգոհներ և աշխատողներ իրենց հայրենիքներ բարեփոխելու։ Բայց որքան զանազանութիւն երկու երկիրների յեղափոխականների ծրագիրների մէջ։ Ինչ որ Պարսկաստանի յեղափոխականի իդեալն է, դա Անգլիան վաղուց իւր յետեւն է թողել։ Երեւակայեցէք Պարսկաստանի յեղափոխականը, որի հայրենիքը խաւարի տգիտութեան մէջ ընկղմուած է, ուր տիրում է կամայականութիւն, ուր դեռ միջնադարեան խաւարը իւր բոլոր ուժով թագաւորում է, ուր անտեսական կեանքը գտնւում է նահապետական շրջանում, ասում եմ երեւակայեցէք որ նա

ելնէ և քարոզէ սոցիալիզմ։ Ի՞նչ անուն կը տաք նրան։ Պոլսեցի «Հոս-Հոս»։ Դա փոխանակ իւր հայրենիքի պահանջների համեմատ գործելու մի ծրագիր պատրաստելու, սարկաստիկ վերցնում է օտարի ծրագիրը, որը ուրիշ պայմանների համար է կազմուած և նրանով կը սկսէ գործել։ Ի հարկէ դրանից միայն վնաս կը յառաջանայ։ Այս բան հասկանալու համար հարկաւոր չէ պարսիկ յեղափոխականին հայերիս նման հարիւր հազար զոհեր տալ։ Բաւական մի փոքր ուշադրութեամբ աչքի անցնել ազգերի պատմութիւնը և դիտել ներկայ կեանքը։

Էս տեսնում եմ ինչպէս մեր «մեծ» գործիչները այս տողեր կարդալով սրահամարհանօք մի կողմ կը ձգեն, բայց ես գրում եմ ժողովրդի համար։ Նրա համար էլ սրա հին բաներ են, բայց ի՞նչ արած որ նա մոռացկոտ է, և այս հին բաները մոռնալով վազեց նորերի յետեւից և նրան հասցրին այս օրուան։ Դառնանք յետ նայինք տեսնենք ինչո՞ւ այս տեղ հասանք։

Էմ.

---

## ԲՈՑ ՆԱՄԱՅ ԽՈՒՍԵՐՈՒՆ

Հրապարակ նետուեցաւ հրաժեշտի խօսքով և Յոսի Գուդարեան ստորագրութեամբ մի թռուցիկ թերթ, որը կ'ամբաստանէ զրեթէ բոլոր Հնչակեան վարիչները, կարծես ինք է միայն մաքուրը, ինք է միայն սուրբը և կոչում կ'ընէ Դաշնակցականներու մէջ ճուլուելու։

Արդեօք այդ պարոնը չը մնացե՞ց, որ ինքն ալ այդ ամբաստանուածներէն մէկն եղած է երկար տարիներու շարքում՝ և ինչպէս ինք կը յայտարարէ — դեռ Ռուսաստանից մեկնելիս ինձ և իմ այն տեղի ընկերներին խաչ յայտնի էր Նաղարբեկեանների եսասէր ու շահասէր ընթացքը — հենց նոյն իսկ այս խօսքով գիտակցաբար մեղսակից եղած կը լինի այդ ղեղին բոլոր կամայականութեանցը և բոլոր շահասիրութեանցը, եթէ չէ՞ մեկցած գործիքը պղտիկ պատառիկներով գոհացող։ Ժողովուրդը այնքան ապե՞ւ է որ սա պարզ հարցումն իսկ չընէ այդ հաւատասիս պարոնին թէ՝ եթէ սխալած էք առաջ, ինչե՞ն գիտանալը, որ չէք սխալիր և այժմ և քիչ վերջ չգիտի հանէք մի ուրիշ թռուցիկ կամ հրաժեշտի խօսք միեւնոյն ոճով ըստ համար դաշնակցականներն ալ։

Ինչ որ է, երկար չը խօսինք։ դառնանք Մխիթեան հարցին, այն է միակ գարմանելին։ Պարոնը կ'ըսէ «Յեղափոխական գործի ներկայ խառնակ միջոցին եթէ կուսակցութիւնների միութեան համար հարց զարթեցնենք, գործիչ յեղափոխականներին զբաղեցնենք արատաւորուած ու շահախնդիր անհատների գործերի քննութեամբ և պահանջենք նոր ընդհանուր ժողով դումարել, նոր կազմակերպութիւն հիմնել, նոր անուն տալ և նորի գոյութեան հետ հայ հասարակութեան նորից ծանօթացնել, այդ այնքան ծանր է և պատասխանատու, բայց ի երկար ժամանակ և զուր տեղն ծախքեր խլելուց, որ աւելի ապէտաբերն է, տեղի կունենայ և այն որ հայ յեղափոխականների փոխադարձ յարաբերութիւնը կը լարուի ի վնաս գործի և ի միութեան բաղմացած խաչապողների։»

Ո՛վ պարոններ, ձեր շուրջը բոլորող հայկատակներու շրջանէն մի քիչ դուրս ելելով, իբր չեղբ մարդիկ, մտիկ ըրէ՛ք թէ ժողովուրդն այսօր ի՞նչ ածականներու տեղատարափով կը պատուէ բոլոր յեղափոխականներն ալ։ այն առեն կ'ըղ-

դաք թէ ի՞նչ ընել պէտք է յեղափոխականն սուրբ դարձին մնաւորապէս կրած ու կրելիք տագին վատնդին առջեւն առնելու համար։ Ձեր ցոյցած դարմանը՝ դարման չէ, այլ քանկրէի բռնուած մարդուն հոգեվարքն երկարացնել է, մահն աւելի դառն ու սոսկալի ընելու համար։ Ձեր առաջարկած անպտղութեան կոչումը միութիւն չէ, այլ ուրիշ անուններու տակ շարունակութիւնը նախկին անպտուղութեան և խառնակ վիճակին։

Պարոննե՛ր, Աստուծոյ սիրուն, մի՛ թաղուք բառերու հետ, զի ժողովուրդը յուսահատած է, տաղտած է, և ընդունելիք թէ կատարեալ պէս Բաբելոնեան խառնակութիւնը կը տիրէ մեր դորձերուն մէջ։ Եթէ ճանճի չափ խելք ունիք, եթէ մանանեխի հատի չափ խիղճ ունիք, համակերպեցէ՛ք արդարութեան ձայնին — այն է առաջարկուած դարմաններու տակ Միութեան դաղափարին — և դէմ այդ ճանճի խելքով փրկած եղէք ձեր ազատիչը և այդ խղճով քաջալերեցէ՛ք դժբաղդ ժողովուրդը։

Դուք ամենքիդ ալ՝ նոյն երդն է որ կ'երգէք, ժողովուրդը մինչեւ հիմայ հնարապարտակի վրայ չը անցաւ մէկ կուսակցութիւն, որ ըսէ, ես ազգին օգտին համար չեմ աշխատիր, ես կեղծաւոր եմ։ Դուք ըսէ՛ք, որի՞ն հաւատանք, երբ դուք ինքնին կը խախտէք ժողովուրդին հաւատքը, գործիքներու նկատմամբ։

Պարոննե՛ր, անհաշիւ և անել է ձեր բռնած ճանբան։ Կ'ըսէք թէ չեզք անձնուրաբութիւններէ ընդհանուր ժողովրդումներեն՝ ժամանակ կորսնցնելու և ահագին ծախքեր ընելու պատճառ կը լինի։ Մենք կ'ըսենք թէ արդէն շատ ժամանակ կորսնցուցինք և շատ ծախքեր ըրինք և եթէ այս սպան բեւեռիւնէ ճանբան շարունակենք, տակաւին շատ ժամանակ ու դրամ պիտի կորսնցնենք, մինչեւ որ Մայր Հայրենիք աւերակներու կոյտ մը դառնայ և միւս կողմէն Հայ ժողովուրդը իր դրպանին մէջ ոսկի մ'իսկ չունենայ տալու։ . . . Կ'ըսէք թէ յեղափոխականներու փոխադարձ յարաբերութիւնը աւելի կը լարուի ի՞նչ դարձին։ Մենք ալ կ'ըսենք թէ ճիշդ այդ կէտը հասկնալու համար է, որ ձեզի փորձաքարին տեղը կը հրամցունենք. զի հոն կամ իրար հասկնալով, կեղծը՝ անկեղծէն, գաղը՝ պարկեշտէն կը զատէ ու կը միանաք և ժողովուրդը միութեան այդ պաշտելի դրօշին ներքև սիրայօժար կուտայ իր կեանքն ու դրամը և կամ իրարու դլուխ պատռելով դուրս կուտաք ձեր թարդյակները, ձեր ներքին մարդը և կը թողուք ժողովուրդին, որ իր դիտցածն ընէ դրօշակիրով ձեր ճակատին բառերու ամենէն ապտուռը։ . . .

Դուք ըսէ՛ք թէ, ի՞նչ . . .

Պ. Ց. ԱՐՄԵՆԱՆ

## ՀԱՅՈՒ ԿԵԱՆՔԷՆ

Շատ բան դրուեցաւ հայու կեանքին վրայ մեր ազգային լրագրաց մէջ. շատ բան դրեց օտար մամուլը մեր ազգային դոյութեան վրայ։ Հայկական խնդիրը ու հայու կեանքը՝ դրուած ամուր կռուանի վրայ՝ կը ծնծեն ու կը ծնծեն, ու տակաւին դիտցուած չեմ՝ ի՞նչ է հայկական խնդիրը, ի՞նչ է հայուն կեանքը։

Ա՛յն յուր ունակութիւնները, այն դարշելի մեծամտութիւնը, այն ազգակործան եսականութեան ոգին՝ որոնցմով փարակուած է մեր ազգին մի կարեւոր մասը, ժամանակ թողուցած չեն ինքնաճանաչութեան ոգին մտցնելու մեր մէջ։ Այսօր հասած ենք այն տեսակ մի տարբ-

օրինակ վիճակի, որուն վրայ չեմք կարող կաղմել մի որոշ դաղափար. անբաստուդութեան մէջ թողած ենք ինքզինքնիս ժամանակի հոսանքին՝ որ ուզած տեղը քշէ ու տանի մեր ազդային դոյութիւնը։ Ի՞նչ պիտի ըլլայ մեր վախճանը. — դաղտնիք է դա մեզ համար. դաղտնիք մնացած է օտարին համար ալ։

Հայը՝ իր դարաւոր դերութեան մէջ մինչեւ հիմակ, այնքան նուրանոր ձեւեր առած, այնքան տարօրինակ ունակութիւններ ու երեւոյթներ ի յայտ բերած ստեղծած ու իրագործած է, որոնցմէ դատելով՝ հայու կեանքը չըլլահայեաց ու մանրաղնին կերպով դիտող մը չպիտի կրնայ կաղմել մի ինքնուրոյն ու որոշ դաղափար։

Ի՞նչ երեւելի գիտուններ, արհեստաստադէտներ, ի՞նչ բարեսէր անձնաւորութիւններ, ազդասէրներ ու անոնց հանդէպ ի՞նչ խաւարամիտներ ու ապիկարներ, ի՞նչ չար ոգիներ ու դաւաճաններ ունիմք մեր մէջ։ Մինչեւ չհասնի ժամանակը՝ որ ատեն կարելի ըլլայ կշռել որոշակի մեր ազգի յուր ու լաւ կողմերը չպիտի հասկցուի մեր ինքնուրոյն արժանիքը։ Մաղմեալ որ այդ ժամանակը, այդ դատաստանի օրը հասնի շուտով, ու հայը կարենայ պարծենալ իր դոյութեան վրայ՝ իր բարեմասնութիւններով ու աւաւելութիւններով, մեր ողջամիտ դասակարգը, մեր հշմարիտ ազդասէրները, մեր կրօնի առաքեալները, ի՞նչու չմիանին հիմակուընէ, քննելու համար ազգին ցաւերը, ու անոր կեանքի ապառնացող հիւանդութեան միջոցները։

Զը խաբուինք երեւոյթներէն, չօրօրուինք սին յոյսերով, տեսանք հասկցանք թէ որքան գուղի նման մեր կուսակցութիւններու դառում դոչիւնները։ Բիրտ ուժին առաջ, բանականութիւնը, խելացութիւնն է որ՝ յաղթող կը հանդիսանայ միշտ։ Մտածեցէք թէ՝ ինչեր կարող էինք ընել ու չըրինք, երբ թուրքը կ'օրօրուէր հեշտութեանց մէջ, և հայկական խնդիրը չունէր ներկայ հրատապ վիճակը։ Մենք՝ մեր բուն դարձուածութեան միջոցին, ազդային դոյութեան հիմերը խախտեցինք, պատրաստելով հիւսնդ ու ապիկար սերունդ մը, որոնցմէ ծնան ներկայ կուսակցութիւնները։ Ի՞նչ խելացու կրակ երախաներ ունիմք, որոնք կը յանդգնին ազգը ղեկավարել հրապարակային մի քանի ճառախօսութիւններ ըրած ըլլալովնին։ Ի՞նչ անճարակ ապիկար ու թանձրամարմին երիտասարդներ ունիմք, որոնք փիլիսոփայի հովը առած իրենց «ես»ը կուզեն փառաւորել տալ միշտ։ Ի՞նչ դարշելի խմոտակներ ունիմք, որոց ամբողջ առաւելութիւնը սրածայր մօրուքը ու փայլուն ակնոցը կրնայ համարուիլ. ճշմարիտ հոսհոսներ որոնք կը սողան մեր ազգ խաւերուն մէջ ու կը թուլցնեն առողջ ինքզինքը, ու տակաւին ինչ անմիտներ ունիմք, որոնք ազնուականի հովը կուզեն ունենալ, թուք ու արհամարանք նետելով ազգաբարի երեսին։

Ո՞վ է յանցաւորը, — ժողովուրդը նոյն իսկ որ՝ չդիտցաւ ճանչնալ ժամանակին իր դոյութեան սպառնացող վտանգները։

Իսկ հիմայ, այնքան բարոյական, նիւթական ու մարդկային կորուստներէ յետոյ, մեր ազդային ճգնաժամուն մէջ՝ անշուշտ պէտք է ուշադրաւ ըլլանք։ Ճանչնամք ուրեմն մեր թերութիւնները, օգտուիմք անցեալի դասերէն. պատրաստենք մնացեալը, ամփոփենք այժերը, ժողովուրդի կամքը յարդել գիտնամք, որպէսզի օր մը կարենամք ճանչնալ ու ճանչցնել թէ՝ հայն ալ ունի իր բաժինը, իր տեղը ազգութեան շարքին մէջ։ Խ.

---

Отговорникъ: П. Глушковъ.

---

Печатница К. Николовъ.—Варна.